ՌՋԾ ըստակ, այլ եւ Ի ղուռուշ եւս ասացաւ: Եւ սկսան չլինել զսակաւս ի ճամոցն եւ մեծամեծքն եւս գնէին հիմունս ի մուտն Փետրվարի ամսոյ եւ մեծամեծ սահմանք շուկայիցն իբր թէ գիւղ գիւղ երեւէր:

Եւ էր մինչև ցայժմ նոտոս և ոչ նշան ցրտոյ. յառաջել ամսոյ Փետրվարի եղեւ ցուրտ յոյժ եւ ամենայն տեղիս, վասն որոյ կրկին նեղացեալ աղքատք ի հացէ, եւ լինէր ԾԻ տրամ հացն ԲԾ ըստակ ցորեան եւ ոչ լինէր այնու, զի եւ գիտութեամբ բանաւորացն եղև Ծ տրամ, քանզի և յԻգնիմիտ ԲԾԻ եւս ծախեցաւ ցորեանն, ԾԻ՝ կորեկն. պրասին օխան Զ ըստակ եւ սոխին՝ Ը: Այսպէս եւ յամենայն երկիր երաշտացեալ յամարայնոյ, վասն որոյ և եղանակ ձմերան չքաւորէին: Ի Զըմըշկածակ գջորիս կերեալ եւ բազումք մեռեալ, և ի տեղիս տեղիս գշունս և զայլ կենդանիս մեռելոտիս կերեալ: Ի Հալապ ասլանլուին[1] զիմօք հացն ապա մի ըստակ եւ ասլանլուն Թ տրամ է. եւ ամենայն Արապստան բազում աղքատք ի սովոյ մեռանէին եւ յԵրուսաղէմ (Ֆերէ):

Եւ ի գաւառն Ակնոյ Դ ղուռուշ քիլակն Ստամպօլոյ, մինչեւ յեղանակս գարնան, որ տեսին զկանաչն եւ սակաւ սակաւ ի դուրս հանեն զցորեան եւ զայլ սերմանիս, եւ մինչ ի Մարտ ի հասարակն Լ-ական ըստակ ի խոնարհ լինէր[2] ամենայն ինչ:

Եւ եղեւ ի մեռանել պատրիգին Երուսաղէմի Յունաց անդ ի գնալն իւրում ի կղզին որ ասի Սախըզ, եւ երկրահաւան ընտրեցին զմետրապօլիտն լերինն Սինէական և առաքեցին աստի Բ եպիսկոպոս՝ զի երթեալ ձեռնադրեսցեն զնա եպիսկոպոսապետ աթոռոյն Երուսաղէմի, և գրել ետուն Սրբո Զէլէպուն զի գրես-

1) ասլուին.   2) լինիր.